ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ԼՈՒՍԻՆԷ ՏԱՆԱՋԵԱՆ lusine.tanajyan@gmail.com
ՍՕՆԱ ՆԵՐՍԻՍԵԱՆ sona.nersisyan2006@gmail.com

ՄՈՒՏՔ

Թբիլիսիի հայ համայնքը, իբրեւ սփիւռքեան միաւոր, առանձնանում է իր ձեւաւորման պատմութեամբ եւ կառուցուածքով: Ժամանակի ընթացքում այն ենթարկուել է արմատական փոփոխութիւնների. ԽՍՀՄ փլուզումը առաջ է բերել նոր մարտահրաւէրներ թբիլիսահայութեան շրջանում: Այսօր տեղի են ունենում համայնքային կեանքի կազմակերպման նոր գործընթացներ, որոնք իրենց ազդեցութիւնն են թողնում Թբիլիսիի հայերի համայնքային կեանքի տարբեր երեսակների վրայ:

Նմանօրինակ առանձնայատուկ համայնքը կարիք ունի համակողմանի ուսումնասիրութեան: Այդ նպատակով իրականացուել է էթնօընկերաբանական հետազօտութիւն՝ Թբիլիսիի հայերի շրջանում: Յօդուածում (որը վերլուծութիւնն է այդ հետազօտութեան արդիւնքների) փորձ է արւում ներկայացնել՝ Թբիլիսիի հայերի ընտանեկան կառուցուածքի եւ յարաբերութիւնների առանձնայատկութիւնները, ինքնութեան որոշ տարրերի դրսեւորումները, համայնքում առկայ արտագաղթի միտումները եւ դրա հետ կապուած գործօնները, համայնքի ներկայացուցիչների, գործիչների ընկերաբանական-տնտեսական աշխուժութիւնը:

Հետազօտութիւնն իրականացուել է հետեւեալ մեթոդներով[1].-

- Ձեւայնացուած հարցում, որն անցկացուել է Թբիլիսիում բնակուող հայերի շրջանում՝ ըստ առանձնացուած խմբերի (սեռ, տարիք, կրթութիւն, բնակութեան տեւողութիւն տուեալ քաղաքում եւն.), ծնագնդակի մեթոդով.
- Չներգրաւուած (non participant) դիտարկում.
- Փորձագիտական հարցում՝ համայնքից քաջատեղեակ փորձագէտների հետ.
- Խորին հարցազրոյց, որտեղ ընդգրկուել են Թբիլիսիում համայնքային կազմակերպութիւնների ներկայացուցիչներ՝ ըստ իրենց հմտութիւնների եւ տեղեկացուածութեան:

Ստացուած նիւթը ներկայացւում է նկարագրական-վերլուծութեան մեթոդով:

ՎՐԱՑԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՌՕՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Նախ անդրադառնանք Վրաստանում հայերի ներկայութեանն ու դրա թուի փոփոխութեանը:

Վրաստանում բնակուող հայերի թիւը մշտապէս փոփոխուել է, ինչը կապուած է եղել տարբեր պատմական իրադարձութիւնների, քաղաքա-

կան եւ տնտեսական պայմանների հետ: Վրաստանում անցկացուած վերջին՝ 2002ի մարդահամարի տուեալներով, երկրի հայկական բնակչութեան թիւը է 248,900 է (առանց Աբխազիայում բնակուող հայերի, որտեղ 2003ի մարդահամարի համաձայն ապրում են 44,900 հայեր):

Աղիւսակ 1. Վրաստանի հայերի թիւը եւ նրանց տեսակարար կշիռը (Վրաստանի պաշտօնական վիճակագրական ծառայութեան տուեալներ)

	Քանակ (1000 հոգի)			% ամբողջ բնակչութիւնից		
Տարի	1989	2002	2014	1989	2002	2014
Հայերի քանակը	437,2	248,9	168,1	8.1	5.7	4.5

Թբիլիսիի հայերի ծաւալած բազմազան գործունէութիւնը հայկական մշակոյթի առանձին եւ տարբերուող շերտ է: Թբիլիսին 19րդ դարի արեւելահայ լուսաւորչական շարժման խոշորագոյն կենտրոններից է եղել: *«19րդ դարում Թիֆլիսում գործում էր գործարար մարդկանց կազմակերպութիւն, գործում էր բարերարների միութիւն: Կային տարբեր կազմակերպութիւններ, որոնք աշխատում էին ի նպաստ տեղի հայութեան»*[2]:

Ըստ փորձագիտական գնահատականների եւ տարբեր աղբիւրների՝ ներկայումս Թբիլիսիում բնակւում է շուրջ 150,000 հայ (ըստ պաշտօնական տուեալների՝ 82,000): Գործում են Ս. Գէորգ առաջնորդանիստ եւ էջմիածնեցոց Ս. Գէորգ եկեղեցիները, Պետրոս Ադամեանի Անուան Հայկական Դրամատիկական Թատրոնը, երկու հայկական դպրոց՝ պետութեան հոգածութեամբ, գործում են նաեւ լրատուամիջոցներ, մի շարք մշակութային, հասարակական կազմակերպութիւններ եւ միութիւններ[3]:

Ինչպէս եւ անցեալում, այսօր էլ հայերի մի զգալի մաս՝ կենտրոնացած է Թբիլիսիում, որտեղ մի շարք թաղամասերում (Հալաբար, Վազիսուբանի, Գլդանի, Վարկեթիլի եւն.) հայերը բնակւում են հոծ զանգուածներով: Այնուամենայնիւ, հայերի թիւն ամբողջ Վրաստանում եւ մասնաւորապէս՝ Թիֆլիսում անընդհատ նուազում է[4]:

Աղիւսակ 2. Թբիլիսում հայերի տեսակարար կշիռը ընդհանուր բնակչութեան մէջ (1897-2002)

Տարի	1897	1939	1959	1970	1979	1989	2002
Հայերի թիւը (% ամբողջ բնակչութիւնից)	30,0%	26,4%	21,5%	16,9%	14,5%	8.1%	5.7%

Այս փոփոխութիւններն ընդհանուր առմամբ ազդում են Թբիլիսիի հայ համայնքի պատկերի վրայ՝ առաջ բերելով նոր դրսեւորումներ համայնքային կեանքի տարբեր ոլորտներում: Դա իր հերթին անդրադառնում է Թբիլիսիի հայերի ընտանեկան եւ ընկերային յարաբերութիւնների վրայ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՏԿԵՐ

Համայնքային կեանքում ընտանիքը եւ ընտանեկան յարաբերութիւնները կարեւոր դերակատարում ունեն: Ընտանիքը համայնքում կատարում է արժէքների պահպանման, դրանց փոխանցման դեր եւ ազդում է համայնքային միջավայրում ընկերաբանական յարաբերութիւնների վրայ: Վերջինս պարզելու համար դիտարկենք ընտանեկան կազմը Թբիլիսիի հայ համայնքի ներկայացուցիչների շրջանում:

Գծանկար 1. Ընտանեկան կազմը (% հարցուածներից)



Ըստ տուեալների՝ հարցուածների շրջանում բարձր ցուցանիշ ունեն պարզ (ծնող/ներ եւ երեխա/ներ) ընտանիքները՝ 45%, միայնակ եւ միայն ամուսիններից բաղկացած ընտանիքները կազմել են 6%, իսկ ընդլայնուած (միքանի ամուսինական զոյգեր կամ միքանի սերունդներ) ընտանիքները, այդ թւում բարդ կազմ ունեցող ընտանիքները՝ 49%ը: Այս ցուցանիշը կարող է բացատրուել բնակարանի ձեռքբերման դժուարութեամբ, որն իր հերթին կարող է ազդեցութիւն ունենալ միաժամանակ ընտանիքում դերերի բաշխման եւ աւանդական միջավայր պահպանելու վրայ:

Գծանկար 2. Ազգականների տարածական ցրուածութիւնը (% հարցուածներից)



Դիտարկենք Թբիլիսիում բնակուող հայերի ընտանիքի անդամների եւ ազգականների տարածական ցրուածութիւնը: Մօտ հարազատների գերակշռող մասը բնակւում է նոյն երկրում՝ 86.8%: Այլ ազգականների մէջ տեսնում ենք երկու ուղղութիւն՝ Հայաստան եւ այլ երկիր: Այլ երկրների

մէջ յատկապէս բարձր ցուցանիշ ունի Ռուսաստանը: Վերջինս կարող է պայմանաւորել արտագաղթի ուղղութիւնը:

Գծանկար 3. Թբիլիսիում ապրող ազգականներին հանդիպելու յաճախակիութիւնը (% հարցուածներից)



Տուեալները ցոյց են տալիս, որ շաբաթը միքանի անգամ ազգականներին հանդիպողները աւելի մեծ թիւ են կազմում: Ազգականների հետ շփման յաճախակիութիւնը կարող է պայմանաւորուած լինել միքանի հանգամանքներով՝ տարածականօրէն մօտ գտնուելը, գործնական յարաբերութիւնների առկայութիւնը, ընդհանուր ընկերային միջավայրում գտնուելը: Սրա հետ կապուած հետաքրքիր է դիտարկել, թէ ինչպէս են դասակարգւում մերձ շրջապատում ընդգրկուած անձինք: Ըստ տուեալների՝ ուսումնասիրուած խմբի համար մտերմութեան առաջին գօտում գտնւում են ընտանիքի անդամները, ապա հարազատները, ընկերները, դրացիները, գործընկերները եւ վերջում՝ համայնքի անդամները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Համայնքի ուսումնասիրութեան համար կարեւոր նշանակութիւն ունի դրա ներկայացուցիչների տնտեսական գործունէութեան դիտարկումը, յատկապէս դրա համեմատութիւնը միջսերնդային կտրուածքով: Վերջիններս կարող են արտայայտել տուեալ համայնքի տնտեսական ներուժն ու դրա զարգացման հնարաւորութիւնները: Որպէս տնտեսական գործունէութեան ցուցանիշ դիտարկուել է սեփական գործ հիմնելու մտադրութիւնը եւ ձեռնարկատիրական գործունէութեան ծաւալման դէպքում գործընկերոջ ընտրութիւնը:

Ստացուած պատկերի համաձայն՝ սեփական գործ հիմնել չցանկացողները բաւականին բարձր ցուցանիշ ունեն, ինչը կարող է պայմանաւորուած լինել ինչպէս ձեռնարկատիրական գործունէութիւն ծաւալելու համար անբարենպաստ պայմանների առկայութեամբ, այնպէս էլ անհրաժեշտ դրամագլխի բացակայութեամբ: Գործ հիմնել ցանկացողների մէջ առաւելագոյն ցուցանիշը կազմել են ընտանիքի անդամներին նախընտրութիւն տուողները: Սա օրինաչափ է այն պարագայում, երբ հարցուածների մե-

ծամասնութեան դէպքում մօտ հարազատները բնակւում են նոյն քաղաքում եւ նրանց հետ հանդիպելու յաճախակիութիւնը բաւականին բարձր է:

Համայնքում տեղի ունեցող փոփոխութիւններն անմիջականօրէն կապուած են տնտեսական գործունէութեան ցուցանիշների փոփոխման հետ:

Հետաքրքիր է դիտարկել Թբիլիսի տեղափոխուածների (հարցուածների 27%ը) տնտեսական գործունէութիւնը: Ըստ ստացուած տուեալների՝ տեղափոխուելուց անմիջապէս յետոյ հարցուածների միայն 54,2%ն է սկսել աշխատել: Չաշխատողների մէջ ընդգրկուել են նաեւ թոշակառուները՝ 4,2%, տնային տնտեսուհիները՝ 4,2% եւ սովորողները՝ 8,3%:

Ընդ որում աշխատողների 42,1%ը պետական հաստատութիւնների պաշտօնատարներ են եղել, 47,4%ը՝ ոչ-պետական, եւ 10,5%ը՝ սեփական հաստատութիւնների: Հարցուածների այն մասը, որը պաշտօնավարում է մասնաւոր, ոչ-պետական բնագաւառում մեծմասամբ տեղափոխուել է Թբիլիսի ԽՍՀՄ փլուզումից յետոյ: Սա ցոյց է տալիս, որ չնայած տեղափոխութեան փաստի, դրա հետ կապուած առարկայական եւ յարակից դժուարութիւնների, տեղափոխուածներն ընդգրկուել են պետական կառոյցներ աշխատանքի: Սրա պատճառը կարող է հանդիսանալ այն, որ մինչ ԽՍՀՄ փլուզումը այս երկու երկրներն ունեցել են միանման վարչական կառուցուածք պետական կառոյցներում, ինչը հեշտացրել է տեղափոխուածների մուտքն այդ համակարգ:

Ըստ ոլորտային կտրուածքի՝ Թբիլիսիի հայ համայնքում տնտեսական գործունէութիւնը առաւելապէս դրսեւորւում է կրթութեան, մշակոյթի, առեւտրի, սպասարկման, շինարարութեան ոլորտներում: Իսկ ամենաքիչը՝ վարչական, դրամական համակարգում: Փորձագէտները նշում են, որ հայերը հիմնականում վրացիների մօտ ընկալւում են բարձր մակարդակի արհեստաւորներ: Այս մրցակցութեան հիմքն այն է, թէ՝ «հայը աւելի լաւ է պատրաստում»: Նաեւ զբաղուած են գիւղատնտեսութեան, մանր առեւտրի մէջ եւ դպրոցներում[5]: Մէկ այլ փորձագէտ նշում է. «*Հայութիւնը աւելի շատ առեւտրի մէջ է: Այստեղ խոշոր գործարարաներ շատ չունենք: Կան միքանի ապակու, տնաշինական եւ այլ գործարարներ, բայց դրանք քիչ հանդիպող երեւոյթներ են եւ համայնքային կեանքի մէջ ընդգծուած դերակատարում չունեն*»[6]:

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՕՆՆԵՐ

Համայնքի ներկայ իրավիճակում կարեւոր տեղ են զբաղեցնում ինքնութեան վրայ ազդող եւ այն ձեւաւորող գործօնները: Այդ առումով դիտարկենք համայնքային կառոյցների դերը: Հայկական համայնքներում աւանդաբար կրթական հաստատութիւններն ունեն ինքնութիւն պահելու, ինքնակազմակերպման եւ լեզուի պահպանման կայուն գործառոյթ: Թբիլիսիի հայկական համայնքի դէպքում կարեւորուել է դպրոցների դերը համայնքի մշակութային, հոգեւոր դիմագծի կերտման մէջ: Սակայն վերջին տարի-

ների համայնքի մարտահրաւէրներից առաւել բարձրաձայնուողը հենց դպրոցների խնդիրն է համարում: «*Կրթական համակարգի բարեփոխումների համատեքստում Վրաստանի կառավարութիւնը հանրակրթութեան ոլորտում անցնում է, այսպէս կոչուած, վաուչերային համակարգի: Այս «բարեփոխումը» ենթադրում է, որ բոլոր այն դպրոցները, որտեղ աշակերտների թիւը 700-800ից պակաս է, մեխանիկօրէն պէտք է փակուեն, քանի որ պետութիւնն ի վիճակի չէ սուբսիդաւորել դրանք: Այնպէս որ այս բնագաւառում հիմնախնդիրներն արդէն համակարգային բնոյթ են կրում*»[8]:

Ներկայումս Թբիլիսիում գործում են 1 լիարժէք հայկական դպրոց եւ 1 դպրոց՝ հայկական հոսքի հիման վրայ:

Հարցուածների ընդամէնը 5,7%ն է յաճախել մասնաւոր դպրոցներ, մնացեալ 94,3%ը՝ պետական դպրոցներ: Պետական դպրոցների մէջ դիտարկուել են ե՛ւ հայկական, ե՛ւ այլ ուղղուածութեան դպրոցները: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Թբիլիսիի հայերի ստուար զանգուած նախընտրում է ռուսական դպրոցները հայկականից, որի հետեւանքով միքանի ռուսական դպրոցների մեծամասնութիւնը, որոշ դէպքերում էլ առնուազն կէսը կազմում են հայեր: Համայնքում չկան այնպիսի հայկական մասնաւոր միջնակարգ դպրոցներ, որոնք կարող էին ապահովել հայկական միջավայր եւ կատարել ինքնութեան պահպանման գործառոյթ: Թբիլիսիում ԽՍՀՄ փլուզումից յետոյ հայկական դպրոցները շարունակում են գործել պետական հոգածութեամբ եւ չկայ գիտակցում այն բանի, որ դպրոցը պէտք է գործի համայքնային ուժերի աջակցութեամբ, դրանով իսկ նպաստելով հայապահպան գործունէութեանը եւ հայկականութեան շեշտադրմանը:

Կարեւոր է դիտարկել նաեւ, թէ ինչ փոփոխութիւն է նկատւում յաջորդ սերնդի ներկայացուցիչների դպրոցի նախընտրութեան հարցում: Տուեալների վերլուծութիւնը տուել է գրեթէ նոյն պատկերը, ինչ որ աւագ սերնդի ներկայացուցիչների մօտ. մեծամասնութիւնը (93,5%) նախընտրում է պետական, իսկ 6,5%ը՝ մասնաւոր դպրոց:

Ինքնութեան մէջ յաջորդ կարեւոր տարրը կրօնն է, որը կատարում է համայնքի համախմբման եւ կարգաւորման գործառոյթ:

Հարցուած թբիլիսահայերի շրջանում կրօնատած մարդիկ կազմում են ճնշող մեծամասնութիւն: Նրանց մէջ պարզապէս հաւատացեալները կէսից աւելին են: Շատ քչերն են նշել, որ անտարբեր են կրօնի նկատմամբ: Հարցուածների շրջանում հաւատացեալների մեծամասնութիւնը հայ առաքելական եկեղեցու հետեւորդ է: Կրօնատած թբիլիսահայերի եկեղեցու հետեւորդ լինելու դրսեւորումներից է եկեղեցի յաճախելը, ինչը ոչ միայն հաւատքի արտայայտումն է, այլեւ համայնքային կեանքում ներգրաւուելու եւ՝ ընկերաբանական նշանակութիւն ունեցող վարք: Հարցուածների 39,5%ը ամէն շաբաթ եկեղեցի է յաճախում: Եկեղեցի չյաճախելը կամ տարուայ

մէջ միքանի անգամ յաճախելը աւելի քիչ հանդիպող երեւոյթներ են: Հարցուածների 38,4%ը ամսուայ ընթացքում մէկից աւելի անգամ յաճախում է եկեղեցի:

Գծանկար 4. Համայնքի ներկայացուցիչների վերաբերմունքը կրօնին (% հարցուածներից)



Եկեղեցի գնալու յաճախակիութիւնը պարզելուն զուգահեռ կարեւոր է պարզել նաեւ այցելութեան նպատակը: Եկեղեցի այցելութեան նպատակը կարող է ցոյց տալ, թէ ինչպէս է արտայայտւում հարցուածների կրօնական վարքը: Պարզ է դառնում, որ այդ մարդկանց մօտ կրօնական վարքը դրսեւորւում է միքանի մակարդակներում՝ անձնային, ընկերաբանական, խորհրդանշական եւ կրօնաձիսական: Սա ցոյց է տալիս, որ հայերի կրօնատած հատուածը բազմաշերտ է: Հարցուածների մեծամասնութիւնը (46,8%) եկեղեցի այցելում է աղօթելու նպատակով, ինչն արտայայտում է կրօնաձիսական վարքը, մոմ վառելու նպատակն ունի առաւելապէս խորհրդանշական բնոյթ:

Եկեղեցուց զատ կարեւոր է պարզել այլ համայնքային կառոյցներում ներգրաւուածութիւնը: Դրանք կարող են ստեղծել հայկական միջավայր, որտեղ դրա ներկայացուցիչներն այս կամ այն կերպ առնչւում են «հայկականութեան» հետ: Ըստ դիտարկման տուեալների Թբիլիսիի հայ համայնքում նկատւում է համայնքային կեանքին, կառոյցներում ներգրաւուածութեան ցածր մակարդակ: Հարցուածների կէսից աւելին նշել է, որ ներգրաւուած չէ համայնքային կեանքին, մօտ 10%ն է, որ զբաղուած է համայնքային կառոյցներում որպէս կազմակերպիչ, եւ մօտ 19%ը՝ որպէս անդամ: Մնացած 20%ը միայն հանդիսանում է այդ կառոյցների միջոցառումների մասնակից:

ԱՐԺԷՔԱՄԱԿԱՐԳ

Ինքնութեան առումով կարեւոր տեղ են զբաղեցնում ազգի մասին կարծրատիպերը: Դրանք ձեւաւորւում են տուեալ ազգի ներկայացուցիչների կողմից, եւ միաժամանակ ազդում են նրանց արժէքային կողմնորոշումների վրայ: Ազգին բնորոշ կարծրատիպերը կարող են ձեւաւորուել ե՛ւ շրջապատող ազգի կողմից տրուած, ե՛ւ իրենց իսկ կողմից տրուած գնահատականներով: Հարցուածների կարծիքները՝ ազգին բնորոշ յատկա-

նիշների վերաբերեալ, բաժանուել են երկու մեծ խմբերի՝ բացասական եւ դրական գնահատականներ[9]:

Հարցուածների ճնշող մեծամասնութիւնը (85,4%) հայերին վերագրել են դրական գծեր: Տրուած պատասխաններում առաւելագոյն քանակի պատասխաններ տրուել են աշխատասէր, ձեռներէց եւ ստեղծող պատասխաններին: Բացասական գնահատականներում ամենայաճախը նշուել են նախանձ, դժգոհ, գանգատուող տարբերակները:

Հետաքրքրիր է դիտարկել նաեւ հարցուածների արժէքային կողմնորոշումների դասակարգումը: Որպէս կարեւորագոյն արժէք հարցուածները նշում են լաւ ընտանիք ունենալու հանգամանքը (մօտ 35%), ապա բարեկեցիկ ու ապահով ապրելը (17,5%), ապա նաեւ մարդկանց յարգանքը վայելելը, հեռանկարային աշխատանք ունենալը, անհոգ ապրելը համապատասխանաբար՝ 14,6%, 13,6% եւ 10,2%:

Գծանկար 5. Համայնքի ներկայացուցիչների արժէքային կողմնորոշումների դասակարգումը (% հարցուածներից)



Քննարկենք համայնքի ներկայացուցիչների կարծիքները ամուսնութիւններին, քանի որ սա իւրային-օտար յարաբերութիւնների վրայ հիմնուած ինքնութեան տարր է:

Իւրայինի առանձնացումը տուեալ հասարակութեան մէջ համարկման, կամ ինքնութեան պահպանման, էթնիկ խմբին պատկանելութեան որոշման ցուցիչ է:

Ազգամիջեան ամուսնութիւնների հանդէպ Թբիլիսիի հայերի գրեթէ կէսը անհանդուրժող է: Այս մասը գտնում է, որ ներէթնիկ ամուսնութիւնները ազգապահպանման լուրջ գործօն են: Այլազգի ներկայացուցչի հետ ամուսնութեան համաձայնութեան պարագայում նախընտրութիւնը տրւում է առաջինը վրացիներին (19,5%), ապա՝ ռուսներին (11,7%): Յաջորդ բարձր ցուցանիշը «քրիստոնեայ» տարբերակն է (7,8%): Յատկանշական է, որ շեշտադրուել է կրօնական պատկանելութիւնը՝ անկախ ազգութիւնից:

Գծանկար 6. Համայնքի ներկայացուցիչների վերաբերմունքը ամուսնութիւններին (% հարցուածներից)



Ինքնութեան ձեւաւորման մէջ կարեւոր տեղ է զբաղեցնում ազգային, քաղաքական, մշակութային կամ այլ կերպարների ընկալումը: Դրանք համայնքի ներկայացուցիչների մօտ ձեւաւորում են որոշակի արժէքներ եւ յատկանիշներ, որոնք կարող են կատարել կարգաւորիչ դեր՝ վարքային կողմնորոշումներում:

Հետազօտութեան ընթացքում համայնքի ներկայացուցիչների կողմից նշուած անցեալի ու ներկայի ականաւոր գործիչների միջոցով փորձ է արուել դուրս բերել այդ կերպարները: Դրանք խմբաւորուել են՝ ըստ ազգութեան եւ հիմնական գործունէութեան սկզբունքի:

Աղիւսակ 3. Ականաւոր գործիչները համայնքի ներկայացուցիչների պատկերացումներում (% հարցուածներից)

Հայ գործիչներ	89
Մշակութային (կրթութիւն, գիտութիւն, մարզական եւն.)	68,1
Ազգային	9,9
Քաղաքական (պետական, հասարակական, կուսակցական)	11
Օտար	8.8
Ոչ մէկ	1,1
ԴՊ[10]	1,1

Տուեալների համաձայն, Թբիլիսիի հայերի ընկալումներում աւելի մեծ թիւ են կազմում հայ գործիչները (89%), իսկ օտարները՝ ընդամէնը 8,8%: Այստեղ ազգութեան սկզբունքի ընտրութիւնը կարեւորուել է զուտ հայ գործիչների դուրսբերման նպատակով, այդ պատճառով այլազգի գործիչները ներկայացուել են մէկ ընդհանուր պատասխանի տարբերակով: Հայ գործիչները խմբաւորուել են ըստ հիմնական գործունէութեան ոլորտների, որտեղ մեծ մաս են կազմում մշակութային գործիչները՝ 63,7%: Սրա պատճառը կարող է լինել այն, որ Թբիլիսիի հայ համայնքը պատմականօրէն ունեցել է մշակութային բնոյթ, եւ ներկայումս էլ համայնքում գերակշռում

են մշակութային գործունէութիւն ծաւալող կառոյցները եւ մշակութային բնոյթի իրադարձութիւնները:

Յատկանշական է, որ այն գործիչները, որոնք իրականացնում են համայնքային գործունէութիւն կամ նոյնիսկ իրենց հիմնական զբաղմունքին զուգահեռ զբաղւում են համայնքային հարցերով հարցուածների կողմից չեն նշուել որպէս համայնքային գործիչներ, այլ ընկալուել են որպէս իրենց հիմնական գործունէութեան ոլորտի ներկայացուցիչներ: Պատասխանների ցրիւ բաշխուածութիւնը խօսում է այն մասին, որ համայնքում չկայ ընդհանրական վերաբերմունք որոշակի գործիչների շուրջ:

ԱՐՏԱԳԱՂԹ

Առհասարակ համայնքի ընդհանուր նկարագրի վրայ իր ազդեցութիւնն ունի արտագաղթը: Ներկայումս Թբիլիսիի հայ համայնքում նկատւում են արտագաղթի որոշակի միտումներ: Դա կարող է դիտարկուել երկրի ընդհանուր արտագաղթի հոսքերի առումով, բայց եւ կարող է ունենալ իր առանձնայատկութիւնները:

Հարցուածների մէջ մեծամասնութիւնը մտադիր չէ տեղափոխուել այլ երկիր: Սա կապուած է թերեւս այն հանգամանքի հետ որ թբիլիսահայերը այդ երկիրը դիտարկում են իրենց համար հարազատ եւ իրենց պապերի երկիրը, որի կառուցման եւ շէնացման մէջ գործօն մասնակցութիւն են ունեցել: Արտագաղթի մտադրութիւն ունեցողների մէջ աւելի մեծ թիւ են կազմում դէպի Հայաստան հակուածները, իսկ այլ երկրների մէջ յատկապէս մեծ թիւ են կազմում Ռուսաստան ցանկացողները: Դա կապուած է վերջին տարիներին այնտեղ աշխատանքային գաղթականների մեծ հոսքով: Սա նաեւ պայմանաւորում է երեխաներին դէպի ռուսական կրթութեան կողմնորոշելը, քանի որ յետագայում իրենց երեխաների ապագան տեսնում են Ռուսաստանում:

Գծանկար 7. Համայնքի ներկայացուցիչների արտագաղթի մտադրութիւնը (% հարցուածներից)



Հետաքրքիր է տեսնել արտագաղթելու մտադրութիւն ունեցողների կարծիքը տեղափոխման պատճառների մասին: Պատճառները շատ են, սակայն հարցուածների մէջ մեծ թիւ են կազմում միքանի պատասխան-

ներ: Մասնաւորապէս, հարցուածների 23,8%ը պարզապէս գտնում է որ դա միակ ճիշտ քայլն է[11], յաջորդիւ դրւում է երեխաների ապագայի հարցը, ապա այլ երկրում հարազատների բնակութեան գործօնն է եւ գործազրկութեան խնդիրը:

Գծանկար 8. Արտագաղթի պատճառներն՝ ըստ համայնքի ներկայացուցիչների (% հարցուածներից)



Նայած՝ թէ ինչն է անհանգստութիւն առաջացնում անձի մօտ, կարող ենք ենթադրել, թէ որ ոլորտի հարցեր են կարեւորւում նրա համար: Բացի այդ, անհանգստութիւնները կարող են նաեւ տուեալ միջավայրից անձի բաւարարուածութեան ցուցիչ հանդիսանալ[12]: Անհանգստութիւնների շարքում կարեւորւում են դրամական, ապա անձնային եւ համայնք-երկիր յարաբերութիւնները:

Սփիւռքին բնորոշ առանձնայատկութիւններից է ընդհանուր ծագումնաբանութեան եւ հայրենիքի հետ կապի ընկալումը: Տարբեր հայկական համայնքներ՝ ե՛ւ աշխարհագրական դիրքի, ե՛ւ Հայաստանին մօտ լինելու եւ այլ հանգամանքների բերմամբ ունեն հայրենիքի ընկալման տարբեր գաղափար: Յատկանշական է, որ Թբիլիսիի հայերի շրջանում հայրենիքը հանդէս է գալիս հենց ծննդավայրը, ապա Հայաստանը, եւ միւս տեղում է ծնողների կամ նախապապերի երկիրը:

Աղիւսակ 4. Թբիլիսիի հայերի պատկերացումները հայրենիքի մասին

Պատկերացումները Հայրենիքի մասին	% հարցուածներից
Հայաստան	25,5
Ծնողների/նախահայրերի ծննդավայր	16,4
Որտեղ ապրում է	13,6
Որտեղ անվտանգ ու արժանապատիւ կեանք կայ	0,9
Ծննդավայր	2,0
Դժուարացել է պատասխանել	2,7

Հայաստանի հետ անմիջական կապը մեծապէս նպաստում է այն՝ որպէս հայրենիքի ընկալմանը: Այս պարագայում կարելի է տեսնել կա՞յ արդեօք կապ Հայաստան մեկնելու յաճախակիութեան եւ հայրենիքի ընկալման միջեւ:

Նախ ներկայացնենք Հայաստան մեկնելու յաճախակիութեան պատկերը հարցուածների շրջանում:

Գծանկար 9. Հայաստան մեկնելու յաճախակիութիւնը (% հարցուածներից)



Հարցուածների կէսից աւելին ՀՀ է մեկնում տարուայ մէջ 2-3 անգամ, կամ ամէն տարի: Աւելի քիչ թիւ են կազմում 2-3 տարին մէկ անգամ մեկնողները, իսկ ողջ կեանքի ընթացքում մէկ անգամ կամ ընդհանրապէս չմեկնածների թիւը առաւել պակաս է: Սա պայմանաւորուած է ՀՀին տարածականօրէն մօտ լինելով:

Աղիւսակ 5. ՀՀ մեկնելու նպատակը (% հարցուածներից)

ՀՀ մեկնելու նպատակը	% հարցուածներից
Այցելութիւն ազգականներին, ընտանեկան տօներ, իրադարձութիւնների մասնակցութիւն	61,4
Զբօսաշրջութիւն, ծանօթացում հայրենիքի	12,9
Ուխտագնացութիւն, հոգեւոր կապ	10,0
Աշխատանք, գործնական այց	8,6
Ուսում	4,3
Տուն ունի Հայաստանում	1,4
Փաստատղթեր	1,4

Հարցուածների մեծամասնութիւնը Հայաստանում է եղել ազգականներին այցելութեան կամ ընտանեկան իրադարձութիւններին մասնակցելու նպատակով: Վերջինս էական նշանակութիւն ունի յաճախակի կապերի պահպանման մէջ: Ըստ այդմ, Հայաստանի մասին պատկերացումները աւելի իրատեսական են, եւ ոչ իդէալիստական: Հիմնական մասը հայաստանեան միջավայրին լաւ ծանօթ է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, Թբիլիսիի հայ համայնքն ունի առանձնայատուկ կազմակերպական կառուցուածք: Համայնքում կազմակերպութիւններն ու կառոյցները չեն գտնուում միասնական տեղեկատուական եւ գաղափարական տարածքում, ինչը խոչընդոտում է ինքնակառավարման գործընթացին: Վերջին շրջանում համայնքի ինքնակազմակերպման եւ համախմբան հարցում յարաբերականօրէն աշխուժ գործունէութիւն է ծաւալում եկեղեցին:

Ներկայումս Թբիլիսիի հայ համայնքում այժմէական է ինքնութեան հարցը. իրականացուող միջոցառումների շարքում գերակշռում են մշակութային բնոյթի իրադարձութիւնները, որոնք նպատակ ունեն աշխուժ պահելու հայերի ինքնութեան խնդիրը: Արդի մարտահրաւէրներից են համայնքում կրթութեան որակի եւ դպրոցների նուազման հետ կապուած խնդիրները:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Էթնօընկերաբանական հետազօտութիւնն իրականացուել է քանակական եւ որակական մեթոդներով՝ «Սեփական եւ Այլազգի Միջավայրում Հայերի Համեմատական Հետազօտութեան Հիմնական Ուղղութիւնները. Ուսումնասիրութեան Խնդիրներն Ու Հեռանկարները», նպատակային ծրագրի շրջանակներում (2011-2020): Ծրագիրն իրականացուել է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի Սփիւռքի Հետազօտութիւնների Բաժնի կողմից (հմմտ.՝ Ռ. Կարապետեան, *Սեփական եւ Այլազգի Միջավայրում Հայերի Համեմատական Հետազօտութեան Հիմնական Ուղղութիւնները. Ուսումնասիրութեան Խնդիրներն Ու Հեռանկարները, Հայրենիք-Սփիւռք Առնչութիւնները Հայկական Մամուլում. Հայաստանի եւ Սփիւռքի Թերթերի Կոնտենտ Անալիզ*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2012, էջ 19):

[2] Ձայնագրութիւն №1: 2017ին Թբիլիսում իրականացուած էթնօընկերաբանական հետազօտութեան շրջանակներում իրականացուել է 25 փորձագիտական հարցազրոյց (ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի Սփիւռքի Հետազօտութիւնների բաժնի արխիւ):

[3] Ձայնագրութիւն №7:

[4] Թամարա Վարդանեան, *Թիֆլիսահայութիւն. Ժամանակի Մարտահրաւէրներն Ու Համայնքի Հեռանկարները, Նորավանք N 20, Երեւան, 2007, էջ 70-85. նաեւ՝ http://www.noravank.am/upload/pdf/292_am.pdf*

5 Ձայնագրութիւն №2:

[6] Ձայնագրութիւն №7:

[7] Պետականօրէն նպաստաւորել:

[8] Վարդանեան, էջ 76:

[9] «Դրական» եւ «բացասական» բաժանումը պայմանաւորուած է հարցուածի տուած գնահատականներով:

[10] Դժուարանում է պատասխանել:

[11] Տուեալ դէպքում հարցուողների կողմից ստացուած «Դա միակ ճիշտ քայլն է» պատասխանի տարբերակում որպէս հայրենիք ընկալւում է Հայաստանը:

[12] Տրուած պատասխանները խմբաւորուել են տարբեր մակարդակների միքանի խմբի մէջ:

THE CURRENT STATUS OF THE ARMENIAN COMMUNITY OF TBILISSI

(Summary)

LUSINE DANADJIAN, SONA NERSISSIAN

lusine.tanajyan@gmail.com

sona.nersisyan2006@gmail.com

The Armenian community of Tbilissi is one of the oldest Armenian communities in the Diaspora. Due to political changes in the country and shifts in Armenian-Georgian relations, the community has undergone different ups and downs throughout history.

Basing their conclusions on material gathered from field work and data collected from recently conducted surveys, the authors shed light on certain aspects of the current socio-economic and cultural conditions of the community, the shifts in identity of the community and its migratory trends.

The paper focuses on demographic feature of the families, intra-communal visits and intra-communal coherence, visits to Armenia, the local Armenian school and community outlet network, the value system of the Tbilissi Armenians, and their mobility, as well as their identity transformation.

Special attention has been paid to the Armenian activists of the community and the role the local Armenian Church plays in maintaining its flock and Armenian identity.